Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հուլիսի 14 -ի N 378 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«Քահանայից պատրաստման լսարանի ննջարանային շենքի տնտեսական
պայմանների բարելավում»

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու քահանայից պատրաստման լսարանի ննջարանային շենքն ապահովել գազի մատակարարումով, էլեկտրաէներգիայով, գազի սպասարկումով և ջրի մատակարարումով:
2.	Ծրագիրը բարեգործական որակելու նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական բարեգործական ընդհանուր միություն
4.	Ծրագրի կատարողը	Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցի, ՀՎՀՀ 04703401
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ք. Էջմիածին, Վ. Կոստանյան. հոգևոր
6.	Ծրագրի բյուջեն	16.542.962 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին, քահանայից պատրաստման լսարանի սանները
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2020թ. փետրվարի 1-ից մինչև 2021 թ. դեկտեմբերի 31-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու քահանայից պատրաստման լսարանի ննջարանային շենքն ապահովել գազի մատակարարումով, էլեկտրաէնեգիայի մատակարարումով, գազի սպասարկումով և ջրի մատակարարումով. **էլեկտրաէներգիայի մատակարարում՝** 6.800.000 դրամ. **գազի նատակարարում՝** 8.400.000 դրամ. **գազի տեխնիկական սպասարկում՝** 342.962 դրամ. **ջրամատակարարում՝** 1.000.000 դրամ. **ընդհանուր՝** 16.542.962 դրամ:
10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է քահանայից պատրաստման լսարանի ննջարանային շենքն ապահովել էլեկտրաէներգիայով, գազի մատակարարումով գազի սպասարկումով և ջրի մատակարարումով, որի ընդհանուր գումարը կազմում է 16.542.962 դրամ. - նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարառում՝ 6.800.000 դրամ՝ (ՀՎՀՀ 01520882) 01.08.2013 թ. կնքված թիվ ԿՊ 0054 պայմանագրի հիման վրա. - նախատեսվում է գազի մատակարարում՝ 8.400.000 դրամ՝ (ՀՎՀՀ 00046317), կնքված 10.11.2015 թ. թիվ N 08311157160 պայմանագրի հիման վրա. - նախատեսվում է գազի տեխնիկական սպասարկում՝ 342.962 դրամ. (ՀՎՀՀ 00930884) հետ 03.10.2016 թ. կնքված թիվ 01324 պայմանագրի հիման վրա. -նախատեսվում է ջրի մատակարարում՝ 1.000.000 դրամ՝ (ՀՎՀՀ 02655115), 06.03.2017 թ. կնքված թիվ 151026038 պայմանագրի հիման վրա:
11.	Ծրագրի իրականացման կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու ֆինանսական բաժնի հետ, ինչպես նաև ՀՀ բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ